ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Հայրապետական տնօրէնութիւնք.

Կոնդակ յանուն Գեր. Տ. Փոխ. Թեմակալին Երեւանայ Տ. Սուքիաս Արքեպիսկոպոսի՝ վասն լուծանելոյ զպսակ պարսկահպատակ Մարգարայ Վարդանեան ընդ կնոջն Փարիի և թոյլատրելոյ վերջնոյս պսակել ընդ Ն. Գամառլուեցի Կիրակոսի Մուրադեան: Թ. 802.

Կոնդակ յանուն Նորին՝ վասն դադարեցուցանելոյ զՍարգիս քահանայ Տ. Սարգսեան Նախիջեւան գեղջ երկամեայ ժամանակաւ ի քահանայագործութենէ, և տուգանելոյ ի վանս Խորվիրապայ յապաշխարութիւն: Թ. 804.

Կոնդակ յանուն Ամեն. Պատրիարքի Հ. Թուրքիոյ Տ. Մաղաքիա Արքեպիսկոպոսի՝ վասն լուծանելոյ զպսակ Յովհաննիսի Ֆրանգիւլեանց ընդ կնոջն Սոփիայի և զրկելոյ զնոսա յիրաւանց վերստին ամուսնութեան: Թ. 822.

Կոնդակ յանուն Տ. Յովսէփ Եպիսկոպոսի Այվազեանց՝ վիճակաւոր Առաջնորդի Եգիպտոսի, վասն տալոյ պաշտօն իմն յեկեղեցիս վիճակին Տ. Աւետիս քահանայի Շաղոյեան: Թ. 828.

Կոնդակ յանուն Վիճ. Կոնսիստ. Տփխիսոյ՝ յաղագս լուծելոյ զպսակ ռուսահպատակ Պօղոսի Բաղդասարեան ընդ կնոջն Նատալիայի և թոյլատրելոյ սմա մտանել ի նոր ամուսնութիւն: Թ. 858.

Կոնդակ յանուն Վիճ. Կոնսիստ. Տփխիսոյ՝ վասն ընդունելոյ օրինական կարգաւ զգեստին նուիրեալ յԱղնուափայլ Տ. Եկատերինեայ Նազլիբեանց ի սեփականութիւն Մ. Աթոռոյ Ս. Էջմիածնի: Թ. 859.

Կոնդակ յանուն Փոխ. Թեմակալին Երեւանայ Տ. Սուքիաս Արքեպիսկոպոսի, յաղագս վերադարձուցանելոյ զերկուս գիւղս՝ Բաշգառնի և Գայլթ, վանացն Ս. Գեղարդայ ըստ առաջնոյն: Թ. 872.

Կոնդակ յանուն Ամեն. Պատրիարքին Կ. Պօլսոյ՝ յաղագս ընդունելոյ զորբ Աղէքսանն Տիգրանակերտցի ի Պաղտատ քաղաքէ ի Սանասարեան վարժարան: Թ. 879.

Կոնդակ յանուն Ամեն. Պատրիարքին Կ. Պօլսոյ՝ յաղագս հրամայելոյ Գերապատիւ Յովսէփ Եպիսկոպոսին Վանայ ձեռնադրել յաբեղայ զՅարութիւն սարկաւագն Կամսարական: Թ. 880.

Կոնդակ յանուն Վիճ. Կոնսիստ. Հայոց Շամախւոյ՝ յաղագս տալոյ վկայագիր ուսուցիչ Արամայ Վիրապեան առ յաւանդել զդաս կրօնի յուսումնարանս Հայոց, գտեալս յարուարձանս Բագուայ: Թ. 897.

Կոնդակ յանուն Հոգ. Կառավարութեան Հ. Կարուց՝ վասն լուծեալ համարելոյ զպսակ ռուսահպատակ Մարտիրոսի Կիրակոսեան ընդ կրօնափոխ կնոջն Մարիամու և թոյլատրելոյ առաջնոյն մտանել ի նոր ամուսնութիւն: Թ. 936.

Կոնդակ յանուն Վիճ. Կոնսիստ. Հայոց Երեւանայ՝ վասն անվաւեր համարելոյ զերկրորդ պսակ ռուսահպատակ Միրզոյի Սաֆարեան. Թ. 939.

Կոնդակ յանուն Կոնսիստ. Շամախւոյ՝ յաղագս թոյլատրելոյ զպսակն Թադէոսի Ամիրխանեան ընդ խօսեցելոյն իւրոյ Մարգարտի: Թ. 958.

Կոնդակ յանուն Կոնսիստ. Վրաստանի և Իմէրէթի, յաղագս յանդիմանելոյ զՅովհաննէս քահանայն Տէր-Գրիգորեան Մուղնի եկեղեցւոյ, առ ի կատարելոյ զպսակն Յովսեփայ Երզնկեան թարց հրամանի Հոգեւոր իշխանութեան: Թ. 960.

Կոնդակ յանուն Գէորգ Եպիսկոպոսի Եւրոպիոյ՝ յաղագս գնալոյ ի Վենետիկ և լինելոյ ներկայացուցիչ միաբանութեան Մ. Աթոռոյ ի յորելինեան հանդիսի երկերիւրամեկի միաբանութեան Մխիթարեանց։ Թ. 963.

Կոնդակ յանուն Առաջն. Տեղապահի Ատրպատականի Տ. Մկրտիչ ա. քահանայի՝ որով շնորհին իրաւունք Տ. Ղևոնդ քահանայի Տ. Աւետիսեան պաշտել զքահանայութիւն իւր։ Թ. 1000.

Կոնդակ յանուն Տ. Խաչիկ Ս. վարդապետի՝ որով կարգի հաւատարմատար ի կողմանէ Մայր Աթոռոյ՝ ի պաշտպանել զիրաւունս Մ. Աթոռոյ առ ի բերելոյ Ջուր ի Հրազդան գետոյ։ Թ. 1001.

Կոնդակ յանուն Սինոդի Ս. Էջմիածնի՝ յաղագս քննելոյ զյայտարարութիւն Կոնսիստորիային Վրաստանի և տալոյ գումար ինչ բնակչաց Զուռիատել գեղջ ի գումարաց Ս. Փրկիչ եկեղեցւոյն Ախալցխայի։ Թ. 1002.

Կոնդակ յանուն Գեր. Տ. Յուսիկ Եպիսկոպոսի՝ որով առաւ նմա արձակուրդ եռամսեայ գնալ ի Ռուսիա յաղագս կայուածական գործոց Մայր Աթոռոյ. Թ. 1012։

Կոնդակ յանուն Տ. Մամբրէ վարդապետի՝ որով կարգեցաւ ի վանահայր Հաւիճոյ վանուց։ Թ. 1017.

Կոնդակ յանուն Տ. Թեմակ. Վիճ. Եգիպտոսի Տ. Յովսէփ Եպիսկոպոսի՝ վասն ամուսնալուծութեան Յարութիւնի Քէմհաճեան Կ. Պոլսեցւոյ ընդ կնոջն Արուսեկի։ Թ. 1036.

Հայրապետական պարգևք.

Կոնդակ յանուն Տ. Յուսիկ վարդապետի Զոհրաբեան՝ որով շնորհեցաւ նմա սև ծաղկեայ փիլոն։ Թ. 720.

Կոնդակ յանուն Տ. Եղնիկ վարդապետի՝ որով շնորհեցաւ նմա սև ծաղկեայ փիլոն։ Թ. 721.

Կոնդակ յանուն Ժողովրդեան Երևան քաղաքի՝ ընդ որում յղեցաւ մասն մի ի նշխարաց Ս. Լուսաւորչի ի Թանդարանն Մայր Տաճարի յաղագս նորակառոյց եկեղեցւոյն՝ որ յանուն Ս. Գրիգորի Լուսաւորչի։ Թ. 723.

Կոնդակ յանուն Փոխանորդի Վիճակին Գօրուոյ Տ. Յովհաննէս վարդապետի՝ որով շնորհեցաւ նմա լանջախաչ վարդապետական։ Թ. 765.

Կոնդակ յանուն վանահօր վանացն Գեղարդայ Տ. Վահրամ վարդապետի՝ որով շնորհեցաւ նմա լանջախաչ վարդապետական։ Թ. 797.

Կոնդակ յանուն գործակալին Դաշնոյ Տ. Վարդան քահանայի՝ որով շնորհի նմա աւագ քահանայութիւն։ Թ. 799.

Հայրապետական օրհնութիւնք եւ շնորհակալիք.

Կոնդակ օրհնութեան յանուն Տ. Տիրուհւոյ Կարապետեան Պոլսոյ՝ վասն նուիրելոյ նորա Մ. Տաճարի 300 արշ. կրկնակի լայնութեամբ մետաքսեայ շապկացուս։

Կոնդակ օրհնութեան յանուն Տ. Հովսեփեայ Նիկողայոսեան Այնթեանց Արմաւիրեցւոյ՝ հանդերձ տեղեկութեամբ զընկալմանէ 100 ռուբլեաց յօգուտ Տաճարի Ս. Էջմիածնի և միոյ փիլոնի՝ շուրջառի և գօտւոյ՝ յանուն Ս. Յակոբայ վանաց Երուսաղէմի։ Թ. 816.

Կոնդակ օրհնութեան յանուն Նորընծայ վարդապետաց ուխտին Արմաշու։ Թ. 823.

Կոնդակ գոհունակութեան յանուն պարսիկ եղբարց Մերաբեանց Դանձակեցւոց՝ վասն նուիրաբերելոյ զզեստինն՝ որ առ կայարանին երկաթուղւոյ՝ առ ի կառուցանել աղօթատուն մերազնէից։ Թ. 856

Կոնդակ յանուն Նորին պայծառափայլութեան իշխան Միմէոնի Միմէոնեանց Աբամելիք Լազարեանց՝ ընդ որում՝ յղեցաւ ցուցակ քսան որդեղրաց յանուն Լազարեան Ճեմարանին Մոսկուայի և յայտնեցաւ գոհունակութիւն Հայրապետական։ Թ. 894.

Կոնդակ օրհնութեան յանուն պ. Մելքոնի Գէորգեան Սէֆէրեանց Արմաւիրցւոյ՝ վասն ընկալման 100 ռ. նուիրանաց։ Թ. 925.

Կոնդակ օրհնութեան յանուն Կեսարացի Մահտեսի Մկրտչի Մահտեսի Պալեան՝ վասն նուիրելոյ մենաստանին Սևանայ 420 ռ։ Թ. 997.

Կոնդակ օրհնութեան յանուն Ն. Բայա-

գիացի Աղարեգի Վարդապետեանց՝ վասն նուիրելոյ 500 ռ. վանացն Սեւանայ։ Թ. 998.

Կանգակ օրհնութեան յանուն Ն. Բայազիացի Գէորգայ Բուռնազեան՝ վասն նուիրելոյ նոյն վանայ 500 ռ. Թ. 999.



ԿՐՕՆԱԿԱՆ

ՅՈՐԴՈՐ

ՁԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԲԱՄԲԱՍԱՆԵԻ ԴԷՄ։

> Ի բաց թօրափեալ այսուհետեւ զամենայն չարութիւն եւ .... զամենայն չարախօսութիւն.
>
> Ա. Պետ. Բ. 1.

Ա.ՌԱՔԵԱԼԸ գրում է դարձի եկած և Յիսուսին հաւատացող մարդկանց։ Իրենց անհաւատութեան ժամանակ նրանք սովորութիւն էին ունեցել չարանալու, երբ մէկը նրանց դէմ մի բան էր գործում։ Այդ չարանալն էլ բնական է որ արտայայտութիւն էր գտել բամբասանքի մէջ։ Բայց հիմա առաքեալն ասում է. «Դէն ձգեցէք ամէն չարութիւն և ամէն չարախօսութիւն» (բամբասանք)։ Ամէն բամբասանք, ասում է նա։ Դրանով նա կամենում է հասկացնել, որ բամբասանքը շատ կերպերով կարող է լինել՝ երբեմն աւելի կոպիտ, երբեմն աւելի նուրբ։ Այո՛, երբեմն այնքան նուրբ կարող է լինել, որ զուտ բարեպաշտական կերպարանք կստանայ։ Բայց՝ դէն ձգեցէք ամէն բամբասանք, ասում է առաքեալը։

Աստուածաշունչը այս բանի մասին շատ է խօսում, և բամբասանքի յանցաւորութիւնը ներկայացնում է ամենասարսափելի խօսքերով և օրինակներով։ Սաղմ. Ե. 9 հ.* բամբասողների մասին ասում է. «Նրանց բերանումը ճշմարտութիւն չկայ, նրանց ներսը չարութիւնով լիքն է. նրանց կոկորդը բաց գերեզման է, և լեզուով նենգում ու կեղծաւորում են» Սաղմ. Թ. 27։ «Նրա բերանը լիքն է անէծքով, նենգութիւնով և բռնութեամբ. նրա լեզուի տակ չարիք և անիրաւութիւն կայ։» Սաղմ. ԺԶ. 4 Դաւիթը գանգատւում է. «Շրջապատուած եմ առիւծներով՝ բոցաշունչներով, այնպիսի մարդկանց մէջ, որոնց ատամները նիզակներ ու նետեր են և որոնց լեզուները սրած թրեր են»։ Եւ դարձեալ Սաղմ. ԿԴ. 2 ևն. «Ծածկիր ինձ չար մարդկանց ընկերութիւնից, անիրաւների ամբոխից, որոնք սրում են իրենց լեզուն որպէս թուր, ձգում են իրենց դառն խօսքերը որպէս նետեր՝ անմեղին ծածուկ հարուածելու համար»։ Եւ դարձեալ Սաղմ. ՃԺԹ. 2. «Ազատիր փրկի՛ր իմ անձը ստախօս շրթունքներից, կեղծ լեզուներից»։ Եւ դարձեալ Սաղմ. ՃԼԹ. 1. ևն. «Ազատիր ազատի՛ր ինձ չար մարդկանցից, որոնք իրենց սրտումը չարութիւն են հնարում, որոնք սրում են իրենց լեզուն օձի պէս. նրանց շրթունքների վրայ իժի թոյն կայ»։— Այս ամենակ խօսքերից կարելի է հասկանալ, թէ բամբասանքը չարութեան ի՞նչ սարսափելի մի արտայայտութիւն է։

Յակոբոս առաքեալը այդ բանի մասին ասում է. «Մի՛ բամբասէք զմիմեանս, ե՛ղբարք. որ բամբասէ զեղբայր կամ դատի զեղբայր իւր՝ զօրէնսն բամբասէ և զօրէնսն դատի. իսկ եթէ զօրէնսն դատիցիս, ոչ առնելի օրինացն ես, այլ դատաւոր (Յակ. Դ. 11)։ Օրէնք ասելով առաքեալը կամենում է ասել քրիստոնէական սիրոյ օրէնքը (Համեմատիր Ա. 25, Բ. 9)։ Երբ մէկն իր եղբօրը բամբասում է, ի հարկէ, կարծում է, որ այդ բանի մէջ ինքն իրաւունք ունի։ Բայց այդ անելով նա արհամարհում է և դատում սիրոյ օրէնքը՝ որպէս սխալ մի օրէնք, որովհետև դա բամբասանքն արգելում է։ Դրանից հետևում է, որ բամբասողը փոխանակ օրէնքը կատարող աստուածավախ մէկը լինելու, ընդհակառակն իրեն բարձրացնում է մարդկանց՝ դատաւորը լինելու, և այդպիսով Աստուծոյ պաշտօնի մէջ է խառնուում. «Որովհետև մի հատ է, օրէնսդիրը և դատաւորը», աւելա-

* Սաղմոսի թուերը յիշուած են գրաբարի համեմատ։